ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-18/28 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 11.12. 2018թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
շահագործման բաժնի պետ՝ Լ. Կարապետյան

Անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների
և կապի հատուկ համակարգերի բաժնի բաժնի պետ՝ Լ. Ավագյան
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների
և կապի հատուկ համակարգերի բաժնի ճարտարագետ՝ Ռ. Հովհաննիսյան
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների
և կապի հատուկ համակարգերի բաժնի ճարտարագետ՝ Ա. Տիտանյան
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների
և կապի հատուկ համակարգերի բաժնի ճարտարագետ՝ Ռ. Այվազյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
մատակարարման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Ս. Մուշեղյան

1. ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-18/28 ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, առաջին տեղ զբաղեցրած մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանները:

1.2. **Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց** ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-18/28 ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

Հանձնաժողովը որոշեց.

2.1. Ընտրված մասնակից ճանաչել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին:

2.2 Քանի որ ծառայությունների ձեռքբերման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, Մասնակցի հետ անգործության ժամկետի ավարտից հետո կնքել պայմանագիր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Լ. Կարապետյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Լ. Ավագյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Տիտանյան	ԳՊ/ԳԱ	
	Ռ. Հովհաննիսյան	ԳՊ/ԲԱ	
	Ռ. Այվազյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ս. Մուշեղյան	ԳՊ/ՄՀմ	